

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

1. Համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի կատարողականը՝

2018 թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտները 30.12.2018թ. դրությամբ 14827,2 հազար դրամ է, որը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմում է 100,2%:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան	
			Փաստացի	Տոկոս
1	Հողի հարկ	1880,0	1882,8	100,1
2	Գույքահարկ (շենք-շինություններ)	520,0	551,9	106,1
3	Գույքահարկ (փոխադրամիջոցներ)	4642,8	4529,0	97,5
4	Գույքի վարձակալությունից վճարներ	428,3	451,7	105,5
5	Տեղական տուրք	246,0	291,0	118,3
6	Տեղական վճարներ	7082,0	6936,7	97,9
7	Դոտացիա	25318,9	25318,9	100,0
8	Տարեսկզբի ազատ մնացորդ	1293,3	1293,3	100,0
9	Հողի օտարումից մուտքեր	2877,0	2877,0	100,0
10	Վարչական բյուջեից հատկացումներ ֆոնդային բյուջե	1550,0	958,9	
ԸՆԴԱՄԵՆԸ		44288,3	44316,4	100,1

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

հազար դրամ

	Բյուջետային հիմնարկներ	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան	
			Փաստացի	Տոկոս
1	Կառավարման ապարատ	14460,0	14117,4	97,6
2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	450,0	417,2	92,7
3	Նախադպրոցական կրթություն	17600,0	17600,0	100,0
4	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	3200,0	3100,0	96,9
5	Այլ մշակութային կազմակերպություններ	820,0	819,4	99,9
6	Գյուղատնտեսություն	188,0	181,9	96,7
7	Հրատարակչություն	100,0	48,0	48,0
8	Աղբահանություն	1500,0	1500,0	100,0
9	Սոց. ծրագրեր	300,0	265,0	88,3
10	Ճանապարհային տրանսպորտ (ասֆալտ)	5670,3	5128,3	90,4
ԸՆԴԱՄԵՆԸ		44288,3	43177,2	97,5

	Բյուջետային հիմնարկներ	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան	
			Փաստացի	Տոկոս
1	Աշխատավարձ	11688,0	11620,2	99,4
2	Դրամական խրախուսում	930,0	929,5	99,9
3	Բանկային ծառայություններ	5,0	4,8	96,0
4	Էներգետիկ ծառայություններ	1050,0	902,5	85,9
5	Կոմունալ ծառայություններ	1510,0	1500,0	99,3
6	Կապի ծառայություններ	250,0	225,4	90,2
7	Ապահովագրական ծախսեր	30,0	29,0	96,7
8	Ներքին գործուղումներ	100,0	81,4	81,4
9	Համակարգչային ծառայություններ	140,0	135,8	97,0
10	Տեղեկատվական ծառայություններ	100,0	48,0	48,0
11	Ներկայացուցչական ծախսեր	1040,0	1006,6	96,8
12	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	50,0	50,0	100,0
13	Մասնագիտական ծառայություններ	230,0	207,3	90,1
14	Սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	79,0	64,0	81,0
15	Գրասենյակային նյութեր	120,0	119,8	99,8
16	Տրանսպորտային նյութեր	60,0	58,0	96,6
17	Կենցաղային նյութեր	120,0	85,4	71,6
18	Սուբսիդիաներ համայնքային կազմակերպություններին	20800,0	20700,0	99,5
19	Սոց. օգնություն	300,0	265,0	88,3
20	Նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմ.ին	16,0	16,0	100,0
21	Շենքերի և շինությունների կապ. վերանորոգում	5670,3	5128,3	90,4
ԸՆԴԱՄԵՆԸ		44288,3	43177,2	97,5

2. 2018 թվականի տարեկան ընթացքում կատարված աշխատանքները.

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 10 նիստ՝ 6 հերթական, 4 արտահերթ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, որի ընթացքում ընդունվել է ավագանու 48 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 39 որոշում, արձակվել՝ 28 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 326 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 362 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
6. Համայնքի բյուջեի միջոցներով գնվել և մատուցվել են հետևյալ ապրանքներն ու ծառայությունները՝
 - 1) Ապրիլի 7-ի Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, չխախտելով ավանդույթը, համայնքի 130 կանանց՝ թոշակառու մայրերի, համայնքապետարանի, մանկապարտեզի, դպրոցի, մշակութային հիմնարկների, բուժկետի և փոստային բաժանմունքի աշխատողների համար 494000 դրամով գնվել են նվերներ:
 - 2) Համայնքի միջնակարգ դպրոցի թվով 9 շրջանավարտների համար գնվել են նվերներ 24300 դրամ արժեքով:
 - 3) Այգեկի մանկապարտեզից դպրոց հաճախող 31 երեխաների համար գնվել են նվերներ՝ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ ընդամենը՝ 251100 դրամ արժողությամբ:
 - 4) Այգեկ համայնքի 2018 թվականի բյուջեից տրամադրվել է դրամական օգնություն՝ ընդամենը 265000 դրամ, որից՝
 - ա. համայնքի անապահով 10 ընտանիքներին 195000 դրամ,
 - բ. «ԷԽՈ» հասարակական կազմակերպությանը՝ 20000 դրամ,
 - գ. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ 30 000 դրամ,
 - դ. «Գյումրին առանց տնակների» հիմնադրամին՝ 20 000 դրամ:
7. «Այգեկի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում կազմակերպվել է ամանորյա միջոցառում, հրավիրվել են Ձմեռ պապ և հեքիաթի հերոսներ, որի համար ծախսվել է 50000 դրամ:
8. Այգեկի մանկապարտեզի 90 երեխաների համար գնվել են ամանորյա նվերներ՝ 61200 դրամ արժողությամբ:
9. Հողի օտարումից ունեցել ենք 2877000 դրամ եկամուտ, որն ամբողջությամբ ծախսվել է 2017 թվականին իրականացված համայնքի փողոցների կապիտալ նորոգման պարտքի մարման համար:
10. Համայնքի մահացած բնակիչների հիշատակի պատվին գնվել են ծաղկեպսակներ:
11. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար համայնքապետարանի աշխատակիցների նկատմամբ կիրառվել է խրախուսում՝ յուրաքանչյուրին մեկ ամսվա աշխատավարձի չափով, ընդամենը՝ 929 500 դրամ:

12. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:

13. Աշխատավարձի և պարտադիր սոց. վճարների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. Ավարտին հասցնել փողոցային լուսավորության անցկացումը (1կմ):
2. Համայնքում հանգստի գոտու և խաղահրապարակի ստեղծում:
3. Քերեզմանատան ցանկապատում:
4. Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում:

Այգեկ համայնքի ղեկավար՝



Այգեկ

Վ. Աբրահամյան

2019 թվականի հունվարի 30
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ գ. Այգեկ